

Կ Ր Թ Ա Ր Ա Ն

Հ Ա Ն Դ Է Ս Ա Մ Ս Օ Ր Ե Ա Յ

ԴՐԱԿԱՆ, ԴԻՏԱԿԱՆ ԵՒ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ

Խմբագրութեամբ

ՀԱՅԿԱԿԱՆ ԿՐԹԱՐԱՆԻ ՆԱԽԿԻՆ ՍԱՆՈՒՅ

ԱՐՏՈՆԱՏԷՐ

Պ. Ա. Տ Ր Ո Ւ Ն Ի

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ — ԹԻՒ Ը

1888 ՅՈՒՆԻՍ


Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ն


Երկու Արօրներ-Առակ (Գ. Վ.) . — Աշխատութիւն (Ա.) .
— Տանս շուրջը (***) . — Ծագումն եւ կազմութիւն Լրկ-
քի (Պ. Մ.) . — Աշանքիք (Գ. Վ.) . — Այլ եւ այլք : —

Կ. Պ Ո Ղ Ի Ս

ՏՊԱԳՐ. ՆՇԱՆ Կ ՊԷՐՊԷՐԵԱՆ

1888





ՊԱՅՄԱՆՔ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ

Մայրաքաղաքիս համար տարեկան կանխիկ դ՛	12
Դաւառաց » » » »	15

ՄԷՆ մի քերթն ձեռքէ կը վաճառուի ի Պոլիս, Պանճէ
գաբու, ջրավաճառ Պօղոս եւ Յակոբ աղայից խա-
նութեան, նաեւ գրավաճառ եւ քղրավաճառ Պ.
Զարէն Թորոսեանի քով, ի գին փրլ. 50

Դաւառներէն դրամի տեղ նամակադրոշմ եւս կ'ընդունուի :

Նամակ կամ ո եւ է գրութիւն պետք է ուղղել առ
Խմբագրութիւն Կրթարան Հանդիսի, Պէրպլըեան տղարան,
Էսկի Զապրիէ ճատտէսի, քիւ 63, ի Պոլիս :
Թղթատարի ծախքը ջլճարուած նամակ չընդունուիր :

Կ Ր Թ Ա Ր Ա Ն

Հ Ա Ն Դ Է Ս Ա Մ Ս Օ Ր Ե Ա Յ

ԳՐԱԿԱՆ, ԴԻՏԱԿԱՆ ԵՒ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ

ՏԱՐԻ Ա .

1888

ՅՈՒՆԻՍ

ԵՐԿՈՒ ԱՐՕՐՆԵՐ

Ա Ռ Ա Կ

- Արօրի խոփ մ'ընդ երկար
Հանգիստ եւ յոյ ապրելով՝
Ծածկուած էր դեղին ժանգով :
Օր մը կը տեսնէ իւր եղբայր
Որ իւր գործէն ետ դառնայր .
— « Մի եւ նոյն ձեռքէ շինուած ,
« Եւ նիւրովք մէք մի եւ նոյն՝
« Ես դեղին եմ ժանգոտած
« Իսկ դու ողորկ եւ փայլուն .
« Ո՞վ տըւաւ քեզ այդ փայլ՝ գոյն : —
— « Մի՛ , ըսաւ միւսն , սիրուն քոյր ,
« Լինիի յիմար այնքան կոյր .
« Ինձ տըւող այս յստակ գոյն՝
« Ոչ դարբնի մուրճ երկաթեայ ,
« Չէ ուրիշ մի մեքենայ ,
« Այլ մի միայն Աշխարհի : » —

Ապաքին աշխատութիւն
 Մարդըս կ'ընէ անըկուն .
 Տըկարն առնու գօր եւ ոյժ ,
 Յիմարն առնու մըտաց ուշ :
 Որ յաջողկուտ աջօր դուք
 Հայիքդ այլոց մեծաշուք
 Վըսեմութեան բարձրութեան ,
 Վաստակոց՝ ջանից փոխան
 Ստէք զանոնք , նախանձիք ,
 Է՞ր բազմիք յոյլ հանդարտիկ .
 Աշխարհիւն , ջանք , ջանք
 Ուսուցանէ այս առակ :

Անախտ առակներ

Գ. Վ.



Ա Շ Խ Ա Տ Ո Ւ Թ Ի Ի Ն



Ա.

Երբ Արարիչն մեր նիւթական մարմնոյն տալով իւր աստ-
 ուածային շունչը՝ կուտայ եւ անոր բանական հոգի , կը յի-
 շեցնէ մեզ այն դատաւճիռն զոր անդարձ արձակած է մեր
 նախահօր : « Աշխատութիւն , յարատեւ աշխատութիւն . սու-
 այդ միայն կը ծնանիս , զի ագուլ միայն կրնաս կատարել
 քեզ սահմանեալ դերն մարդկութեան մէջ : Յերեկը դիտուդ
 վերեւ պիտի փայլի հրածորան արեգակն՝ որ կը թաւալի
 ոտիցս տակ . դա՛ է երկինքէն կախուած այն ժամացոյցն որ
 յաշխատութիւն կը կոչէ զմարդիկ . կանգնէ՛ անոր հետ ի
 դործ , եւ ցորչափ դա կ'ողողէ իւր լուսով զհամադոյս , մի՛ դադ-
 րիր գործելէ : » Արդարեւ այն ինչ կը բացուին մեր աչկունք

ի տես աշխարհի՛ և ահա կը պարզուին գործունէութեան տեսարանք :

Ահա՛ ընդարձակ դաշտորայք զոր ժրջան մշակն ոռոգեր է իւր քրտամբ . ահա՛ մեծամեծ արտորայք ծածկուած ատոք հասկերով , և աշխատասէր մշակն ժպտուն կը մերձենայ գերանդին յուս , երգելով կ'արտահնձէ , սրայներ կը կապէ և ձմրան պաշարն կը համբարէ իւր շտեմարանին մէջ . ուրախ է , զի սա է արդար վարձքն իւր վաստակոյ և ճշմարիտ պտուղ իւր քրտանց : Մտնեմք պարտէզ մը , կը տեսնեմք քաղցրաբոյր ծաղկանց բազմերանգ ածուներ , կը տեսնեմք ծաղկաբոյծն՝ որ իրեւ մեղու կ'այցելէ մէն մի ծաղիկ , գուրդուրանօք կը դիտէ և կը դարմանէ զանոնք . կը հըրձուի , զի իւր քրտինքն թափած էր այդ հողոյն մէջ որոյ ծոցէն կը փթթին այդ ծաղիկունք ի հատուցումն իւր աշխատութեան և վաստակոյ : Սահիմք Վոսփորի վրայէն հեղիկ , ահա՛ հոյակապ պալատներ չքեղաշուք , ահա՛ մեծամեծ շէնքեր փառաւոր . և սակայն ինքնարոյս են արդեօք այդ շինուածք՝ որք իրենց խրոխտ ճակատներն կը դիտեն յաւէտ Վոսփորի հայելոյն մէջ . — Ո՛չ , այլ անտաշ քարին , խճուտ աւազին և կիզիչ կրին վրայ թափեց մարդ իւր ճարտարութիւնն , իւր քրտամբ խմորեց զայնս , գաղափարեց և կազապարեց այդ ձեւն :

Այլ միթէ՛ աստ կը վերջանայ մարդոց աշխատութեան սահմանն . բնաւ , այլ հողագնտիս ամբողջ երեսն իրենց գործունէութեան ասպարէզ ընելէ յետոյ , կը ձեղքեն երկրիս թանձրախիտ խաւերն , կը թափանցեն երկրագնտիս խորախոր յարկերն իսկ և երկրիս ծոցէն կը խլեն , կը հանեն նախնական նիւթեր՝ որք նոյնպէս մարդոց աշխատութեամբ գործարանաց մէջ կը ստանան զանազան ձեւեր ի կիրառութիւն մեր : Մտնեմք հոն պահ մը . ի՛նչ շարժումն , աստ եւս սաւաւել կենդանացեալ կը տեսնեմք աշխատութիւնն , ահա՛ բազմաթիւ գործաւորներ որք կ'աշխատին անդուլ , ահա՛ մեծաշուինդ մեքենայներ՝ որք կը գործեն անխոնջ՝ արձակելով ոյժ և շարժում . կը շարժին անդադար բազուկներ , կը

չարժին անիւներ և ճախարակներ , կը շարժին՝ արտադրելով մեր կենաց համար պիտանի առարկայներ :

Այսպէս ուր նայիմք , կը տեսնեմք մարդոց աշխատութիւնն որ իբրեւ բնական օրէնք՝ կը տիրապետէ և կը սքսնուի իւր առատ շնորհներն : Աշխատութիւնն է այն ընկերական մեծագոյն մեքենայն՝ որ կ'արտադրէ հարստութիւն , կը ստեղծէ հանգստութիւն , կը հայթայթէ մեր ամենազգի պիտոյքն ամբողջովին : Ահա՛ այս մեքենայն է որ կը վարէ ի վաղուց և պիտի վարէ յաւիտ զաշխարհ համօրէն : Մարդիկ այս մեքենային լծակին վրայ յեցած՝ որչա՛ր փոխեցին երկրիս կերպարանքն : Ի՛նչ հսկայ գործեր ի գլուխ ելան եւ քանի՞ մեծամեծ շէնքեր կառուցուեցան , լերանց ապառաժուտ կողերն տեղի տուին և մարդ բացաւ ընդ այն իրեն համար հեշտ և դիւրին ճանապարհ : Մեր նախահարց հոգիներն որք կը սաւառնին անշուշտ մեր վրայ՝ որքա՛ն կը զարմանան արդեօք ի տես այսքան գործունէութեան , ի տես այսքան փոփոխութեան . կը տեսնեն նոքա ամէն բան կերպարանափոխեալ , ամէն կողմ՝ զարդարեալ , անապատներն և խոպան վայրերն լազմամարդ քաղաքօք ծածկուած , ծովերն և լեռներն հաղորդակցութեան պարզ ուղիներ զարծած : Այլ կ'օրհնեն՝ զմեզ մեր գործունէութեան համար թէ կ'անիծեն՝ զի յանդդնեցանք ձեռնամուխ լինել ընտրեալ՝ եղծանելով նորա կուսական գեղ ու շնորհ . . . :

Բ.

Աշխատութիւնը բնական օրէնք մ'է մեր վրայ՝ մեր բարոյական ու նիւթական պիտոյքը լիովին հայթայթելու համար : Այսու կրնամք կատարել մեր դերը մարդկութեան մէջ . անով միայն կրնամք օգտակար լինել մեր անձին . զի աշխատելով միայն կրնամք մշակել գիտութեանց և ուսմանց այս ինչ ճիւղն , կամ ուսանիլ արհեստ մը , և կամ տիրանալ հարստութեան : Ապա ուրեմն աշխատութեամբ միայն կրնամք ապահովել մեր կենաց անդորրութիւնն և բարե-

բաստիկ կեանքի մը հանգամանքներն : Մեր անձին օգտակար լինելէ վերջ կըսկսիմք լինիլ մեր ընտանեաց՝ տալով անոր մեր աջակցութիւնն : այսպէս աշխատութեամբ մարդոյս դերն հետըզհետէ կ'ընդլայնի , կ'սկսի աշխատիլ իւր ազգին և հոսի ուրեմն մարդկութեան համար : Ժրաջան և գործունեայ անհատ մը պարծանքն է իւր ընտանեաց , բարեկազմ և դիւրակեաց ընտանիք մը զարդն է իւր ազգին , և յառաջագէտ ազգ մը սլսակն է մարդկութեան : Այսպէս անհատք կը զօդին ընտանեաց հետ , ընտանիքներ՝ ազգաց հետ , և ազգք՝ մարդկութեան հետ , և կը կազմեն ընկերական մեծագոյն շղթայն :

Մարդկութիւնն է այն մեծ կեդրոնն ուր կը հեզու անձ մը , ընտանիք մը , ազգ մը իւր աշխատութիւնն , և ուստի կը հայթաթուին իւր պէտքերն : Դրամարկղ մ'է այն , ուր կը ձգէ ամէն ոք իւր լումայն և փոխարէն կը ստանայ իրեն համար պէտք եղած ամէն ինչ : Արուեստագէտը կը բերէ հոն իւր ձեռագործաց հաւաքածոյն , գիտունն՝ իւր նորոգ գիւտն կամ անհունութեան ծոցէն խլած մի գաղտնիքն , իմաստասէրն՝ իւր գաղափարաց լոյսն , ընկերաբանն՝ իւր խորհրդոց փունջն , բանաստեղծն՝ իւր սրտին հառաչն ու աւաչ , իւր հոգւոյն ելեւէջներն ներդաշնակ տաղերով , և ամենեքին կը ստանան իւրեանց պիտոյքն : Այս երեւակայական կեդրոնն այնքան քաջ հաշուակալ մ'է , որ յամենուստ հաւաքածն փոխադարձ կերպովութեան սահմանելով հանդերձ և բոլոր մարդկութեան յօդուտ շահագործելով հանդերձ՝ իրրեւ հաւատարիմ աւանդասլահ՝ ընդունածին արդար փոխարէնը միայն ձշգիւ կը հատուցանէ : Պէտք է աշխատիլ ասլրելու համար : Բնական օրէնք մ'է սա , առանց որոյ ո՛չ մի անհատ , ո՛չ մի ընտանիք և ազգ կրնայ ապրիլ և յառաջադիմել , այլ կը կորսուի մարդկութեան մէջ անհետ և աննշան :

Աշխատիլ պէտք է ուրեմն լռին և խոնարհ , կատարելու մեր դերն նախ արժանավայել դիրք մը ստանալու ընտանեաց մէջ , ապա ընտանեաց տալու վիճակ մ'ազգին մէջ . . .

Ա .

ՏԱՆՍ ՇՈՒՐՋԸ

Այն նախահայրական տունն՝ զոր՝ հայրս ի հիմանց կառուցած է, սահմանափակ հորիզոն մ'ունի. ի զուր կը սաւառնիմ առաստաղին վրայ՝ հարաւային կողմն ծածկող սաղարթախիտ ծառոց տերեւներէն ընդնշմարելու, և հիւսիսային կողմն բարձրացող աւատական հսկայ շէնքի մը ետեւ տարածուող խոնարհ յարկերն տեսնելու. արեւմուտքէն սակայն կրնամ նշմարել տաճարին զսնդակատունն որ մերթ տօն մը կ'աւետէ և մերթ մահ կը գուժէ: Արեւելեան կողմն հորիզոնն սակաւիկ ինչ կ'ընդարձակի, կը նշմարեմ հեռուն ափական բլուրներն, որոց ետեւէն առաւօտեան աստղն միշտ կ'աւետէ մեզ նոր օր, նոր կեանք, նոր մտածում, նոր առաւստանք. երբեք չթերանար դա իւր պաշտօնին մէջ զերթ հաւատարիմ և հլու արբանեակ հզօր տիրող մը:

Հաճելի է ինձ դարնան առաւօտուն բազմիւր տանս այս կողմն և վայելել դրացւոյս պարտիզին գեղեցկութիւնն, լըսել թռչնոց դայլայլիկներն և շնչել դեռափթիթ և համապարտ ծաղկանց բոյրն: Տանս այս խորշին մէջ՝ բաժնուած պահ մը դրական աշխարհէն, այս վաղանցիկ անդորրութեան մէջ կը բարձրանամ մերթ վերացական խաւերն՝ գաղափարելու համար մարդկային կենաց նպատակն, նպատակ անըստոյգ և անծանօթ զոր ոչ մի փիլիսոփայ կրցած է ցարդ ի լոյս հանել. զուր մտացո՛ւմն, զուր ջանք: Այլ հետաքրքիր մարդկութիւնն ինչ վիճակի մէջ ալ գտնուի, հարուստ թէ աղքատ, իմաստուն թէ տղէտ, զգայուն թէ անզգայ՝ այն ինչ կ'ունենայ առիթ մեկուսանալու դրական աշխարհէն, հոգոց և վաստակոց աշխարհէն, գրեթէ ամէն անգամ այդ նպատակին վրայ կը խորհրդածէ, և թէպէտ միշտ տնեւ բաւղի մը մէջ մոլորեալ և պարտասեալ կը գտնէ զինքն սակայն յամառ խուլարկութիւն մ'ընելէ չբազմիւր: Այո՛, տկար մարդկութիւնն կը խոստովանի իւր պարտութիւն՝ եսն ճանաչել չկրնալուն, և փիլիսոփայն իրաւամբ կը բացագան-

չէ առ աստեղագէտն . « Է՞ր քննել տիեզերաց անհունութեան գաղտնիքներն որ կը գտնուին միլիոնաւոր մղոններ հեռու , դու ինքն ես լի դաղտնեօք , լուծէ՛ նախ քոյդ , և ապա ընդ անհունութիւն սաւառներով՝ որոնել և խուզարկել ջանա՛ տիեզերաց գաղտնիքն » : Այս էին նաեւ իմ միակ մտածումներս մենութեան մէջ և ամէն անգամուն պարտութիւն կը կրէի՝ գաղտնեաց պահապանին դէմ մղած մարտիս մէջ : Եւ մինչ պարտեալ կ'ուզէի թողուլ մենութիւնն և մշտնեւ դրական աշխարհին մէջ՝ դաշն երգեր խառն ընդ նուագս թոյլ չէին տար մեկնիլ անտի :

Այն պարտիզին մի կողմն , որոյ զարդարանքն ձրի վայելելու արտօնութիւն ունիմ , կը բարձրանայ ուղիտակ մեծ շէնք մը կէս հայկական և կէս գոթական ոճով շինուած , որ երբեմն բնակութիւն էր բազմամարդ և երջանիկ ընտանեաց մը . մահն ցրուեց զայն , և այժմ այդ շէնք նոր Պրոսպատիկէ մ'է զոր հիմնած է անգղիացի պատուելի մը՝ Իսրայէլի որդիները քրիստոնէութեան փարախն մտցնելու նոր փորձ մը ընելու : Նորանշան երեւոյթ մ'է այս՝ միսիոնարական դրութեան մէջ և պարսաւական հակապատկեր մը գոգցես մի քանի շահամուլ և մոլեռանդ պատուելեաց յիմարական արարքին որով կը ջանան դարաւոր ազատ եկեղեցւոյ զաւակներն Լուտերի և Կալվինի դաւանութեանց հպատակեցնել հացով և դրամով :

Դաշն երգեր , ըսի , կ'երկարեն մենութեանս ժամերն . ամենօրեայ գոհաբանութիւններ են դոքա ուղղեալ առ Գերագոյնն որք կը ցրեն պահ մը՝ եսն ճանաչելու մտածումներն և առ Նա կ'առաջնորդեն զիս : Սակայն այն ինչ այդ նուագք դադար կ'առնուն՝ իրենց ներշնչած գերբնական գաղափարներն եւս կը ցրուին առաւօտեան հեզասահ զեփիւռին թեւոց վրայ . արդարեւ կը գգածուիմ պահ մը դաշնակին նուրբ թեւոց թրթուիւններէն , սակայն այդ զգացմունք վայրկեանական են և արմատ չեն ձգեր սրտիս խորն . . . :

Մինչ այս մինչ այն , արեւմտեան կողմէն կը լսեմ զանգալի մը ձայնն որ ամէն առաւօտ և երեկոյ յեկեղեցի կը հրա-

ւիւրէ հաւատացեալներն : Երբեմն մարդկային բնական ձայնն էր որ կը վարթուցանէր ժողովուրդն իւր խոր քունէն , եւ ժամակոյն երիցին ականջէն բռնելով՝ իւր պաշտօնատեղին կը տանէր . ժողովուրդը և կղեր հետզհետէ խլութեամբ վարակուեցան , և մարդկային ձայնն փոխանակուեցաւ փայտէ և ապա երկաթեայ կոշնակին . խլութիւնն սակայն ծանրանալ սկսաւ , և փոխանակ կոշնակին՝ զանգակն եղաւ հաւատացելոյն յուշարարն . զանգակներն ևս հետզհետէ մեծնալ ըսկսած են և կարծեմ օր մը Մոսկուայի հռչակաւոր զանգակն ի Պոլիս պիտի բերուի խուլ ժողովրդեան լսել տալու և անտարբեր կղերին պաշտօնն յիշեցնելու : Ի լուր , կ'ըսեմ , այդ զանգակի ձայնին աննկարագրելի խորին յուզում մը տիրեց սրտիս ի յուշ այն դիւթիչ երգեցողութեանց որք մարդս կը վերացնեն պահ մը երկնային խաւերն , ուր տեսնել կը թուի նա հրեշտակաց դասերն և պարերն առ ոտս գահոյից Արքային արքայից : Խուլ ժողովրդեան իբր խուլ անհատ ամիս մ'էր լիուլի յորմէ հետէ այցելած չէի տաճարն , այլ այնքան խոր արմատ ձգած էին սրտիս մէջ այն վսեմ խօսքեր զորս անկարելի էր ինձ մոռնալ մինչեւ ցգերեզման : Կարելի՞ էր չյիշել Անդաստանական Աղօթքն , որ կը պարզէր մեզ այնքան հեշտ եղանակաւ Դրախտավայրին աշխարհագրութիւնըն . կարելի՞ էր ինձ չյիշել այն բարեմաղթութիւնն որ կը բարձրանայր խնկոց հետ , յանխախտ պահպանութիւն դարաւոր աթոռոյն . ի վերջոյ կարելի՞ էր ինձ ի մոռացօնս արկանել այն ընդհանրական մաղթանք ի խաղաղութիւն աշխարհիս : Ի խորոց զգածեալ՝ չէի կարող մեկնել այդ խորհրդոց և բարեմաղթութեանց վսեմութիւնն և ոչ իսկ մոռնալ այդ նահատակ եկեղեցւոյ հալածանքներն օտարներէ և իւր իսկ զաւակներէն : Անմոռնչ և անտրտունջ կրած է պանոնք իւր խորհրդանշանին համաձայն որ է խոնարհութիւն , իւր դրօշին ներքեւ որ է խաչն , և իւր հզօր պետին հովանւոյն ներքեւ որ է Աստուած

ԺԱԳՈՒՄՆ ԵՒ ԿԱԶՄՈՒԹԻՒՆ ԵՐԿՐԻ

Ի տես այն անհամար փայլուն գնդոց որք կը զարդարեն երկնային կամարն՝ ամենայեւորն ռամիկն իսկ կրնայ գաղափարել թէ տիեզերքը Երկրիս վրայ չվերջանար, թէ անտի և անդր կայ այլ ստեղծագործութիւն մը՝ որ գոգցես սպասարկու է Երկրիս։ Գիտութիւնն սակայն ունենալով աւելի զօրաւոր տեսողութիւն մը և նուրբ հաշիւներ, հաստատելով հանդերձ ռամիկին առաջին գաղափարն՝ կը յարէ թէ Երկրիս սահմանէն դուրս գտնուող ստեղծագործութիւնն եւս առաւել վեճմ և անիմանալի է, և Երկիրս բաղդատմամբ անոր չարժեք իսկ մի փոշւոյ հատիկ, մի աննշան հիւլէ, թէպէտ և մեր աչաց առաջ անսահման է և մեր ուսումնասիրութեանց համար անսպառ գանձեր ունի իւր ծոցոյն մէջ։ Ուրեմն այդ հեռաւոր երկնային մարմնոց՝ աստեղաց, մոլորակաց, արբանեկաց և գիսաւորաց կազմութեան պատմութիւնն կրնամք ուսանիլ Երկրիս վրայ, եթէ Աստեղագիտութիւնն ուշադիր՝ պահ մը լռէ ի լուր Երկրաբանութեան կարծեաց։

Երկրքին անխոնջ դիտունք՝ Հէրշէլ և Լարլաս բանաւոր տեսութիւններ յղացան տիեզերաց կազմութեան վրայ, որք դեռ եւս կը հաստատուին Փիզիքական փորձերով։ Այդ տեսութեանց հիմն այն է թէ՝ անհաշուելի ժամանակ յառաջ, տիեզերական նիւթն գրեթէ միակերպ տարածուած էր անջրպետին մէջ, տեղ տեղ խտացեալ մասերով։ Այս խտացեալ մասերն ձգողութեան ազդեցութեամբ, շարժման կեդրոններ եղան, ծնունդ տուին աստեղաց՝ որք սկսան յաւիտեական ծիրեր գծել ըստ Օրինաց Նեւտոնի և Քէլլէրի։

Այսպէ՛ս կը մեկնեն ծագումն բովանդակի մարմնոց և մեր Արեգական՝ յորմէ ծնաւ և մեր մոլորակ Երկիրն։

Շարժման զօրութեամբ Արեգական մի մասն օղակաձեւ բաժնուելով, գլորեցաւ շուրտ անջրպետին մէջ (անջրպետին բարեխառնութիւնն կը հաշուի մինչեւ — 300⁰) և եղաւ

մի գունդ հրեղէն և լուսաւոր , զանգուած հրեղէն նիւթոյ և վառարան կաղերու , շարժելով միշտ որոշեալ ծիրի մը վրայ :

Բիւր բիւրուց դարեր թերեւս մի և նոյն շաւղին հետեւեցաւ Երկիրս , աիւելով իւր շուրջ անսպառ ջերմութիւնն , և լուսաւոր ճառագայթիւք արգասաւորելով մերձաւոր աշխարհներ : Աքանջելի՛ք Բնութեան :

* *

Կ'անցնին միլիոն դարեր . . . :

Հրային գունդն տակաւ առ տակաւ կը շիջանի և բարեխառնութիւնն կը նուազի սակաւիկ մի , Մեր մոլորակ իրկրին շողուն մակերեւութին վրայ , թերեւս լուսնային կամ մի այլ աշխարհի բնակիչք (եթէ կային երբեք) կը տեսնէին կը դիտէին բիծեր նման անոնց՝ զորս կը տեսնեմք այսօր Արեգական վրայ :

Ի՞նչ էին այդ բիծեր . — Թերեւս ցամաքաց սիզբնանը-լաններ , Հիմալայաի կամ Տորոսի , Ալպեանց կամ Անտեանց սաղմեր , որք վէտ ի վէտ կը ծփային սոյն հնոցի հեղուկ մակերեւութին վրայ :

Յեղաշրջումներ՝ վեր ի վայր կործանումներ կը յաջորդեն միմեանց , նուրբ կեղեւ մը կը կազմուի Երկրիս արտաքին երեսին վրայ և տակաւ կը թանձրանայ . չոգին՝ մթնոլորտին ցուրտ խառոց հետ միացած , կը փոխուի յանձրեւ և ծխաշունչ սահանօք կը տեղայ , կրկին կը շոգիանայ և կրկին կը տեղայ : Այլ կեղրոնէն անսպառ կաղեր դուրս կը ժայթքեն և յառաջ կը բերեն անհուն ծաւալումն . կը փչրեն նուրբ կեղեւն և վերջապէս յետ հաղարաւոր ամաց՝ զոր մարդկային և ոչ մի երեւակայութիւն կարէ ըմբռնել , անդորրութիւն կը հաստատուի և խորին լուսութիւնն կը յաջորդէ պայթմանց եւ ողորմանց . հուրն տեղի կուտայ ջրոյն , պոբիւրիւք , երկաթակուճք , հրափրիւք կը խտանան :

Երկրաբանական առաջին շրջանն է այս :

* *

Կ'անցնի միլիոն մ'եւ տարի . . . :

Ս. Գրոց Մենդոցի վեց օրերն կ'սկսին , օրեր՝ որոց տե-
ւողութիւնն հաւասար է թերեւս եռիլիոն ամաց , որպէս կը
գրէ Տը Պօմօն : Երկրի հաստատուն կեղեւն կազմուած է
արդէն . ցամաքաց կմախքներ և ոսկերոտիներ կը տարած-
ուին բեւեռէ ի բեւեռ , կ'երեւին լեռանց կատարք , ծովուց
ընդարձակ աւազանք և անապատ դաշտք : Բովանդակ եր-
կիրն լերկ է ամենայն զարդարանքէ . կեանքը բացակայ է .
Ովկիանոսը յայնժամ չէին կայուն , կոհակը կ'եռան և կը
ծխան անդնդոց մէջ , լերինք կը կանգնին և խոնաւ կղզիք
կը բարձրանան ալեաց մէջ միշտ և շարունակ , մինչեւ որ
ցամաքն կը ստանայ կենաց յարմար բարեխառնութիւնն .
մթնոլորտն կը լցուի ածխական թթուով . հողն դեռ կիղիչ
է : Ահա յայնժամ կ'երեւին տունկեր , բուսական թաղաւո-
րութեան հսկայներ՝ որոց ներկայացուցիչք հազիւ կը դըռ-
նուին այժմ հասարակածային անտառաց մէջ . բարձրակա-
տար արմաւենիք , ահագին պտերք (fougère) , անստուեր
անտառներ կուգան ողջունել զերկիր : Օդն շնչելի կը լինի ,
ջուրն կը խտանայ , բոյսք կը գեղեցկանան և անուշաբոյր
գանձերով կը ծածկեն երկիրն : Կենաց գոյութեան համար
ամէն ինչ իւր ժամանակին կը սպտրաստուի , և այս , կըսէ
Ֆլուրէնս , կ'ապացուցանէ զգոյութիւն Աստուծոյ , մի միակ
Աստուծոյ . եթէ երկու լինէր Աստուած , երբեք չպիտի լի-
նէր այս ներդաշնակութիւն :

Բուսոց հետ կը ծնանին և կենդանեաց ստորին կարգեր .
թուլամորթք , խեցեմորթք , միջատք կը վխտան օդոյն և ջրոյ
մէջ : Ստեղծագործիչ զօրութիւնն անդիմադրելի մի թռիչ
կ'առնու :

Երկրաբանական երկրորդ շրջանն է այն :

*
* *

Կ'անցնին դեռ հազարաւոր ամեր :

Ստեղծագործութիւնն աստիճան մ'եւս կը կատարելա-
գործի . թռչունք , ձկունք , շորքոտանիք , կաթնաուք , մը-

սակերք և այլք կ'երեւին առաջին անգամ, նախապատմական այդ առաջին ժամանակաց արեւուն տակ : Բազմաթիւ բուսական և կենդանական ցեղեր կը յաջորդեն միմեանց, կը մեռնին և անդնդոց մէջ կը սուզին, թողլով միայն կմախքներ, դրոշմներ, հետքեր, պատկերներ՝ որովք մարդկային հանճարն ապա ստեղծեց բրածոյից գիտութիւնն :

Այս է երրորդ շրջանն, յորում դեռ չ'երեւիր մարդ էակն :

* *

Կ'անցնին հազարաւոր տարի'ներ եւս . կենդանիք աւելի կատարեալ տիպ մը կ'առնուն, և ի գլուխ նոցա կ'երեւի նախապատմական մարդն :

Յանկարծ բնութեան վերջին ցնցումներն, կրկին յեղաշրջումներ վեր ի վայր կը շրջեն ծովուց մակարդակներն, ջուրը կը յորդի ցամաքաց վրայ . անհաշուելի կենդանիք կը սուզին, կը կորնչին . ջրհեղեղ մ'է, — գուցէ Ս. Գրոց ջրհեղեղն, — յետ որոյ խաղաղութիւնը կը վերահաստատուի . . . :

Այսպէս, շատ հին կազմութիւն մ'ունի մեր Երկիր, հընութիւն մի պատկառելի, որ հոգեկան և մտային խորհրդածոթեանց ներշնչում կուտայ մարդոյն, անսպառ սնունդ՝ գիտնոյն եւ խանդավառ աւին՝ բանաստեղծին քնարին, և Սաղմոսերգուն՝ որ կը գոչէ խորհրդաւոր իմն . « Խորհեցայ յաւուրսն յառաջինս, խորհեցայ և զարհուրեցայ : »

Վաղանօթ

Պ. Մ.



Ա Շ Ա Ն Թ Ի Ք

Արիւիկէի արեւմտեան կողմն Կինէայի հիւսիսային եզերաց վրայ է Աշանթիներու աշխարհն : Երկիրն առատ է ոսկւոյ հանքերով և բուսական բերքերով . շաքարեղէգ, արմաւի, նարինջի, անանասի, քօքոյի և պանանայի և այլ բազմատես-

սակ վայրի ծառեր՝ Աշանթիներու աշխարհն Ափրիկէի դը-
րախտն կը ներկայացնեն : Կորեակն , եգիպտահատն , որիզն ,
բամբակն , կոփենին , կարագածառն և կաթնածառն իրենց
առատ բերքերով կը զեղուն երկիրն : Վայրի անասունք բազ-
մաթիւ են՝ ընդ որս առիւծն , յովազն , շաքայն և փիղն որոյ
ատամունք և ոսկերք՝ երկրին հարուստ բերքերէն մին կը
կազմեն : Աշանթիք երկայնահասակ և զօրեղ են , և լաւ կազմ
մ'ունին : Իրենց մարմինն պղնձագոյն իւղային շփմամբ կը
կակղցնեն : Իրենց տարազն շատ պարզ է . անասնոց մորթէ
կամ կերպասէ լայն գօտւով մը կը պատեն մէջքն . մանեկօք
և ապարանջանօք կը զարդարեն իրենց վիզն , բազուկներն և
սրունքներն . խեցեղէնք , անասնոց ճիրանք և ատամունք
սոյն անճոռնի գոհարեղինաց տարրերն են : Աշանթիներու
մազն սեաւ և գանգուր է . պատերազմին գլխոյն վրայ կը
կրէ թագ մը՝ որոյ ճակատին կողմն երկու եղջիւրներ կան .
իսկ հասարակ ժողովուրդն գլխոյն վրայ փետուրներու խուրճ
մը կը կրէ : Կանայք հոս չեն ենթարկուած այն գերութեան ,
որ յատուկ է բարբարոս Ափրիկէի , այլ ընդհակառակն խոր-
հըրդատու են իրենց արանց . սակայն կրնան վաճառուիլ :
Բազմակնութիւնն յԱշանթիս ներելի է . իրենց թագաւորն
պարտի միշտ 3333 կին ունենալ անփոփոխ : Աշանթիք ար-
իւնուռլտ են , և մարդկային զոհերն իրենց կրօնական ծիսից
կարգէն են : Երբ մեծատուն մը մեռնի՝ անոր հետ կը թա-
ղեն շատ մը գերիներ և յաճախ իսկ անոր ազգականներէն և
բարեկամներէն մի քանին . յայնժամ ընդհանուր սոսկում մը
կը տիրէ երկրին մէջ . ժողովուրդն առ հասարակ կը փախչի
տնտառներն և արտերն . սակայն փախստականք միշտ կը
բռնուին և գլխատուելով՝ մեռելոյն հետ կը թաղուին : Աշան-
թիներու կառավարութիւնն բռնապետական է . արքայն՝ որ
Քուսուսի անուն մայրաքաղաքն կը բնակի , բացարձակ իշխա-
նութիւն ունի ուղածն ի գործ դնելու . ինքն տէր է իւր
հսկատակաց կենաց և ընչից : Ոչ միայն ըստ իւր քմաց մեծա-
տանց ինչքերն յարքունիս կը գրաւէ , այլ և կը հրամայէ նո-
ցա անձնասպան լինելու , առ այս կը զրկէ անոնց սուր մը և

թոյն , և եթէ դատաւարտեալք մերժեն զանոնք՝ շան մը հետ գետամոյն կ'ընեն խոկոյն :

Մինչ այսօր Ափրիկէի արեւմտեան մասն , ընդ որս Քօնկօ եւրոպացի դաղթականաց նոր ասպարէզ մ'եղած է . կը յուսացուի որ Աշանթիներու աշխարհին նման մի հարուստ և բերրի երկիր՝ նոցա ուշադրութենէն չվրիպի և շատ հաւանական է որ մի օր անգղիական ստացուածք մ'ըլլայ :

Գ. Վ.

ԱՅԼ ԵՒ ԱՅԼ Ք

Անմարսողութիւն՝ պատճառ պարտութեան . — Նարոյէոն Ա. այնքան ուրամու էր , որ պատերազմի դաշտին վրայ իսկ լաւ սեղան մը պատրաստել կուտար . անկանոն մանաւանդ ճաշի ժամանակի մասին՝ արագութեամբ ուտելու սովորութիւնն ունէր : Լայրցիկի պատերազմէն մի քանի ժամ առաջ ոչխարի խորոված ամբողջ զիստ մը կերաւ , և կ'ըսուի թէ նոյն պատերազմն կորուսանելուն պատճառն՝ նոյն աւուր անմարսողութիւնն եղաւ , որոյ պատճառաւ կարող եղած չէր ամենայն պազարիւնութեամբ ընել ռազմագիտական հաշիւներն : Պօլստինօյի պատերազմն նոյնպէս անմարսողութեան պատճառաւ կորոյս :

Կարկուտի պատճառն . — Կարկուտն կը տեղայ ամէն կըլիմայի ներքեւ և ամէն եղանակի մէջ . թէպէտ և կարկուտի գլխաւոր պատճառն դեռ անծանօթ մնացած է , սակայն կը թուի թէ անհաւասար բարեխառնութեամբ օդային հոսանաց բաղխմանէն յառաջ կուգայ՝ երբ օդոյն մէջ ելեքտրականութիւն գտնուի : Կարկուտն երկու տեսակ է , մանր՝ որ կը տեղայ ձմեռ ատեն ընդհանրապէս ձիւնէն յառաջ , և խոշոր՝ որ տաք եղանակի և երկրաց մէջ յաճախ կը տեղայ : Առաջինն ծագում կ'առնու անձրեւի կաթիլներու ստուելովն երբ

աւելի քիչ լարեխառնութիւն ունեցող օդէն անցնին . միւսն ելեքտրականութեամբ , որ յատկութիւն ունի մեծապէս տարածելու և խիստ ցրտացնելու օդոյն այն մասն՝ ընդ որ կ'անցնի : Այս կը թուի լինել հաւանականաբար ամրան եղանակին մէջ ջրոյ շոգւոյն ի կարկուտ փոփոխելուն պատճառն :

Օճերու իրենց ձագերն կլնելն . — Կենդանաբանութեան համար զարմանալի գիւտ մ'եղած է ի Գուկու (Աւստրալիա) : Մր. Գուկի , որ կը տեղակադրէ զայն , կ'ըսէ թէ սոյն գաւառին մէջ պտոյտ մ'ըրած միջոցին՝ մեծ սեւ օձի մը և իւր 18 ձագուց վրայ յարձակած էր ի մեծ զարմանս և տեսած էր որ մայրը , ի նշան վտանգին որ կսպառնայր , սկսաւ բերանն բանալ , և սուլել , նոյն միջոցին ձագերն սկսան մի առ մի բերանէն ներս մտնել : Յանդուգն խուզարկուն յաջողեցաւ սակայն սպաննել զայն , և անդամահատելով կենդանի գտաւ ձագերն՝ որք սկսան մարմնէն դուրս վիժել : Այս գիւտ կը ջրէ ընդ միշտ մի քանի սկեսպտիկեան գիտնոց երկբայութիւնն , որ չէին հաւատար թէ օձերն կը կլնեն իրենց ձագերն՝ վտանգ մը պատահած միջոցին :

Մտածման արագութիւնն . — «Մտածման չափ արագ» , կ'ըսէ Ժողովրդական առածն , և անշուշտ բազումք կը կարծեն թէ մտաւոր գործողութեանց արագութիւնն անկարելի է չափել : Արդ , մի դար յառաջ Հալլէր գառաջինն փորձեց կամաց ազդեցութեամբ ուղեղէն յառաջ եկած ջղային շարժմանց արագութիւնը չափել : Արագ և բարձրաձայն կարդալով մէկ վայրկեանի մէջ միջին հաշուով արտասանած գրերուն թիւն համրեց . այնուհետեւ չափեց ուղեղէն լեզուին և բերնին գացող ջղին երկայնութիւնն , իւրաքանչիւր գիրն մի ջղային շարժման արդիւնք համարելով , մէկ վայրկեանի մէջ արտասանեալ գրերուն թիւը՝ ջղին երկայնութեան հետ բազմապատկեց և ստացաւ 150 ոտք (գրեթէ 50 մեթր) մէկ երկվայրկեանի մէջ , որ էր ջղային շարժման փոխադրութեան արագութիւնն : Թէեւ այս փորձը պակասաւոր էր , սակայն նոր և ճշգրտոյն խուզարկութիւնք՝ Հալլէրի ձեռք բերածէն շատ տարբեր արդիւնք մը չեն տուած : Հէլմօլց՝ յետ բա-

զուամ փորձերու, վերջապէս հաստատեց որ այդ արագութիւնն ի մէկ վայրկեցի մէջ 111 ոտք (35 մետր)․ այս թիւը կը կարծուի լինել ճշգրտոյն, և ինչպէս կ'երեւի, մտածման արագութիւնն շատ աւելի չէ ճեպընթաց կառախմբի մ'արագութենէն, և շատ նուազ՝ նոյն իսկ ձայնի արագութենէն որ է 331 մետր մէկ երկվայրիկէնի մէջ․ իսկ գրեթէ ոչինչ է բաղդատմամբ լուսոյ արագութեան՝ 300,000 հազարամետր և ելեքտրականութեան արագութեան՝ որ է 463,00'0 հազարամետր :

Բնական ծանրաջափ մը . Օդային փոփոխութիւններն ցըցունող ամենաարդ ծանրաջափն է սարդի ոստայնն : Մօտաւուտ անձրեւի կամ հողմոյ նշան է սարդի ոստայնին թելերուն կարճնալն և ամբիփոփելն, և ընդհակառակն անոնց երկարիլն և թուլնալն նշան է հանդարտ և գեղեցիկ օդոյ մը, որոյ տեւողութիւնն ըստ չափու կարելի է գուշակել : Եթէ սարդն անգործ մնայ՝ անձրեւի նշան է, իսկ եթէ անձրեւի ատեն անդուլ ալխատի՝ կարճատեւ տարափէ մը յետոյ պայծառ օդոյ նշան է : Դիտուած է նաև որ սարդը ամէն քսան և չորս ժամ իւր ոստայնին մէջ փոփոխութիւն կը մուծանէ, որ եթէ արեգական մարը մտնելէ առաջ տեղի ունենայ՝ պայծառ օդոյ նշան է :

Ջարմանայի իրականութիւն մը .— Երկու անձինք, որ մի և նոյն քաղաքի մէջ և մի և նոյն վայրկեանին ծնած էին, զարմանալի զուգադիպութեամբ մը մի և նոյն քաղաքի մէջ և մի նոյն վայրկեանին մեռան . սակայն հաշուելով դիտուեցաւ որ մին քան զմիւսն 100 օր աւելի ապրած էր : Այս իրողութիւն կը վերագրուի երկրիս շուրջը նաւարկութեան : Ինչպէս յայտնի է եթէ մէկը երկրիս շրջանն ընէ՝ դէպի արեւելք ուղեւորելով օր մը կը շահի, և ընդհակառակն դէպի արեւմուտք ուղեւորելով օր մը կը կորսնցնէ : Արդ սոյն երկու անձինք նաւորդներ եղած էին որք թէպէտեւ մի և նոյն վայրկեանին ծնած և մեռած էին՝ այլ անընդհատ ուղեւորութեամբ մին քան զմիւսն 100 անգամ աւելի տեսած էր արեգական ծագումն : Այս տարբերութիւնն յառաջ եկած էր ուրեմն երկու նաւորդաց բռնած հակառակ ուղղութենէն :